1572. Թվ. ՌԻ. Սեպտ. ԺԸ, օրն երկուշաբթի։ Օլախաց երկրին պա-
ռոնն որ կոչի Պոկտան վոյվոտայ, եկաւ ի Կամենիցն, մանուկ տիոք, ամաց
իբրեւ եօթնեւտասանից, բայց հասակաւն էր կատարեալ, և պատկերաք գե-
ղեցիկ, և եկաց երեք օր ի քաղաքս. և իշեալ էր ի տունն Քարափչովսքիյին.



Պատկեր Հրաշագործ Ցիրամօր Կամենիցայ.

և քաղաքին իշխանն՝ այսինքն սդարոսդան՝ Բոթոցքիյ, մեծաւ պատուով զինքն
ընդունեց. և պատուելով մեծարեցին, և կոչեցին զնա ի պատիւ ի Հայոց
Դատաստանատունն, և մեծ ուրախութիւն կատարեցին կերակրովք և ըմ-